# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N „ՀՀԿԳՆՄՊՔ-ՄԱԱՊՁԲ-08"

«12» հունիսի 2018 թ. ք. Երևան

«Արաքս հրատարակչություն» ՍՊԸ-ն (հետագայում՝ Կատարող), ի դեմս տնօրեն Յովսեփ Խուրշուդյանի, որը գործում է ըստ կանոնադրության և ՀՀ ԿԳՆ Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ (հետագայում՝ Պատվիրատու), ի դեմս Ռուբեն Հովհաննիսյանի, որը գործում է ըստ կանոնադրության, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը իրականացնում է Պատվիրատուի մասին տեղեկատվության զետեղումը Կատարողի կողմից հրատարակվող «Յայաստանի քոլեջները և արհեստագործական ուսումնարանները 2018-2019թթ.» (հետագայում՝ Տեղեկատու) 1 (մեկ) սև-սպիտակ էջում և տրամադրում է նրան տեղեկատուի 3 (երեք) օրինակ:

## 2. ԿԱՏԱՐՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարողը պարտավորվում է.

2.1. Մինչև տեղեկատուի տպագրումը Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել իրեն վերաբերող գովազդային էջի մշակված, էջադրած և ձևավորած օրինակը:

2.2. Պատվիրատուի պահանջով ծանոթացնել նրան իրեն հատկացված էջի նախապատրաստման, մշակման, էջադրման և ձևավորման աշխատանքների ընթացքին:

## 3. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատուն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

3.1. Կատարողին է տրամադրում իրեն հատկացված էջում տեղադրվելիք գովազդի բովանդակությունը:

3.2. Պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրված տեղեկատվության արժանահավատության և ճշգրտության համար:

3.3. Սույն պայմանագրի կնքումից ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում վճարում է Կատարողին

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՅԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 23000 (Քսաներեք հազար) դրամ (փոխանցումով):

4.2. Պատվիրատուն պարտավորվում է ամբողջությամբ վճարել պայմանավորված գինը Կատարողին սույն պայմանագրի 1.1 կետում նշված աշխատանքների կատարման օրվանից 3 օրվա ընթացքում (կանխիկ կամ փոխանցումով):

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրի հետ կապված բոլոր վիճահարույց հարցերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ գործող օրենսդրության սահմաններում:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմից:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն միևնույն հավասարազոր իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
7.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և կնքման պահից և կորցնում է իր ուժը Կողմերի կողմից փոխադարձ պարտավորությունները կատարելուց հետո:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԿԱՏԱՐՈՂ | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ |
|---|---|
| «ԱՐԱՔՍ հրատարակչություն» ՍՊԸ | «Մեղրու Պետական քոլեջ» ՊՈԱԿ |
| Երևան, Կոմիտասի 5ա, բն 13 | ք. Մեղրի, Գ. Նժդեհի 10 |
| h/h 1570010302510100 | h/h 1609911009930 |
| Ամերիաբանկ ՓԲԸ | «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01239654 | ՀՎՀՀ 09703482 |
| ՏՆՕՐԵՆ | ՏՆՕՐԵՆ |
| Հ. Խուրշուդյան | |